

Գանատան շարունակում է պնդել
արցախահայությանն ինքնորոշման իրաւունքի
իրացման եւ գերիների ազատ արձակման
անհրաժեշտութիւնը



Կարդալ էջ 3

Հայաստան, Միացեալ Նահանգներ ու Ազրայէջնան
ստորագրեցին Միացեալ Հռչակագիր՝
«Թրամփի Ուղի»-ին վերաբերեալ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ստորագրեցին միացեալ հռչակագիր «Միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման համար Թրամփի երթուղի»-ին վերաբերեալ (Trump Route for International Peace and Prosperity), որ պիտի ճանչցուի TRIPP յայաւումով:

Ուաշինկթընէն «Արմէնփրես»-ի թղթակիցը կը տեղեկացնէ, որ Թրամփ, Ալիեւ եւ Փաշինեան այս հռչակագիրը ստորագրեցին 8 Օգոստոսին, Սպիտակ տան մէջ կայացած եռակողմանի հանդիպումէն ետք:

Հռչակագիր... Ծար. կարդալ էջ 3

Վանաձորի մէջ սկիզբ առաւ ՀՅԴ
Գանատայի Երիտասարդական Միութեան
15-րդ պատանեկան ճամբարը




Կարդալ էջ 3

ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

8 Օգոստոս 2025-ին Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի միջնորդութեամբ Ուաշինկթընի մէջ ստորագրուած Միացեալ Նահանգներ, Հայաստան, Ատրպէյճան միացեալ յայտարարութիւնը ո՛չ միայն չի արտացոլացներ Հայաստանի Հանրապետութեան պետական եւ ազգային շահերը, այլ նաեւ հարուած է Հայաստանի ինքնիշխանութեանը:

Հայաստանի իշխող վարչակազմի որդեգրած քաղաքականութիւնն ու անհաւասարակչիւ որոշումները տրուած են գաղտնի կերպով: Անոնք կ'ոտնահարեն հայ ժողովուրդին հաւաքական իրաւունքներն ու կենսական շահերը, կը ստեղծեն ապահովական նոր մարտահրաւէրներ եւ սպառնալիքներ, կը վտանգեն տարածաշրջանի ռազմաքաղաքական հաւասարակշռութիւնն ու Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը՝ կասկածի տակ դնելով ՀՀ պետականութեան գոյութիւնը:



Յայտ. ... Ծար. կարդալ էջ 4

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի
յայտարարութիւն

Սպիտակ տան հովանաւորութեամբ Հայաստան-Ատրպէյճան Ուաշինկթընի մէջ կայացած բանակցութիւնները՝ մեր պետականութեան հետագայ աշխարհաքաղաքական զարգացումներու խոր ճգնաժամի մը ազդանշանն են:

«Ջանգեղուրի միջանցք»ը կեանքի կոչելու միտուած «խաղաղութեան» այս նախաձեռնութիւնը օր ցերեկով կ'օրինականացնէ մեր պատմութեան երկրորդ հայասպանութիւնը՝ Արցախի բնիկ ժողովուրդի բռնի տեղահանութիւնը, կ'ոտնակոխէ Արցախի ազգային ինքնորոշման արգար իրաւունքը, վերանորոգ թափ կու տայ Արցախի հայկական պատմական ժառանգութեան հանդէպ ատրպէյճանական պատմական խեղաթիւրումներուն եւ մոռացութեան կը մատնէ Պաքուի մէջ անարդարօրէն արգելափակուած հայ ռազմագերիներու դատը:

«Ջանգեղուրի միջանցք»ը՝ հակահայկական աշխարհաքաղաքական ծրագիր է, որուն ետին կանգնած Թուրքիան եւ Ատրպէյճանը, «միջանցք»ի «խաղաղարար» գործընթացի հունաւորումէն ետք՝ յստակօրէն թիրախ ընտրած են ձեւաւորել Թուրքիա-Ատրպէյճան ցամաքային անմիջական հաղորդակցութեան սահման, որուն յաջորդ հանգրուանի իրագործուելիք նպատակը կ'ըլլայ՝ պետութեան հարաւային պատնէշ՝ Սիւնիքի ռազմավարական տարածքի բռնազրաւումը:

Այս միջանցքը, ապագայի հաշուարկներով, Հայաստանի հարաւային դարպաս Սիւնիք-Իրան սահմանահատուածը կրնայ վերածել տարածքային վիճարկելի հարցի, եւ Հայաստան կրնայ յայտնուիլ համաշխարհային ռազմաքաղաքական շահերու բախման կիզակեղրոնին մէջ:

Այս բոլորը ի մի բերելով, Հայաստանի վրայ պարտադրուած նման «խաղաղութեան» միջանցքի պայմանները դատապարտելի են, որովհետեւ անհամատեղելի են հայոց պետականութեան ապագայ զարգացման եւ գոյութեան հետ եւ կը սպառնան ընդհուպ մինչեւ Հայաստանի ազգային անվտանգութեան համակարգի լիակատար խորտակման:



ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէ

 **MAZDA**
GABRIEL

2025 MAZDA CX-5

CONTACT KEVORK ASADOURIAN,
GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES.
KEVORK@GABRIEL.CA

ANJOU • PLATEAU • ST-JACQUES • ST-LAURENT



Al Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանէկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Գանատան շարունակում է պնդել արցախահայությունեան ինքնորոշման իրաւունքի իրացման եւ գերիների ազատ արձակման անհրաժեշտութիւնը

Հայ Դատի Գանատայի յանձնախումբը տեղեկացնում է, որ Օգոստոսի 10–ին Գանատայի արտաքին գործերի նախարար Անիտա Անանդը, հայ–ատրպէյճանա–կան՝ Ուաշինկթընեան պայմանաւորուածութիւնների վերաբերեալ հանդէս է եկել յայտարարութեամբ, որտեղ, ի թիւս այլնի նկատել է. « Դիւանագիտական բանակ–ցութիւնների միջոցով ձեռք բերուած այսպիսի համաձայնութիւնները յստակ ուղի են բացում Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համապարփակ խաղաղութեան համար, որը կ’օգնի լուծել մնացած խնդիրները, այդ թուում՝ բոլոր հայ ռազմագե–րիների եւ ձերբակալուածների ազատ արձակումը, հայ քաղաքացիական անձանց անվտանգ եւ արժանապատիւ վերադարձի իրաւունքի ապահովումը, ինչպէս նաեւ մշակութային ժառանգութեան պահպանումը։

Գանատան նկատի է առնում ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման որոշումը եւ պատրաստակամ է աջակցել ապագայ ցանկացած մեխանիզմի, որը կ’ապահովի ու–ժի չկիրառման սկզբունքը, տարածքային ամբողջականութեան յարգումը եւ ինք–նորոշման իրաւունքը։

Գանատան վերահաստատում է իր յանձնառութիւնը՝ ապահովելու երկարա–ժամկէտ խաղաղութիւն, կայունութիւն եւ բարգաւաճում Հարաւային Կովկասում՝ ներառեալ Լեռնային Ղարաբաղի հարցի քաղաքական կարգաւորուած լուծման հասնելը»։

Հայ Դատի յանձնախումբը բարձր է գնահատում Գանատայի պաշտօնական դիրքորոշումը, յատկապէս այն պայմաններում, երբ վերջին օրերի զարգացումնե–րից յետոյ, նկատոււմ է Ղարաբաղեան հակամարտութիւնը, աւելի քան 120.000 անձանց բռնի տեղահանումն ու արցախահայութեան անքակտելի իրաւունքները մոռացութեան մատնելու միջազգային միտում։

Հայ Դատի Գանատայի յանձնախումբը շարունակելու է աշխատանքները Գանատական կառավարութեան հետ, որպէսզի պաշտօնական Օթթառւան առաջի–կայում եւս պահպանի իր շատ կարեւոր այս դիրքորոշումը։

ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական գրասեմեակ **11/08/2025**

Հռչակագիր... Սկիզբը կարդալ էջ 1

Միացեալ Նահանգներու նախագահը հռչակագիրը ստորագրեց իբրեւ վկայ, իսկ Հայաստանի վարչապետն ու Ատրպէյճանի նախագահը՝ ստորագրելով փաստաթուղթը, պիտի հաստատեն իրենց ուղին դէպի խաղաղութիւն եւ կայունութիւն։

Եռակողմանի հանդիպումէն առաջ կայացաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի հանդիպումը։ Այս մասին Փաշինեանի մամլոյ բանբեր Նազելի Բաղդասարեան ըսաւ, թէ նպատակ ունենալով խորացնել ռազմավարական համագործակցութիւնը երեք առանցքային ոլորտներու մէջ, Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու կառավարութիւնները ստո–րագրեցին «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծի կարողութիւններու զարգացման ոլորտին մէջ գործընկերութեան, արհեստական բանականութեան եւ կիսահաղորդիչ–ներու ոլորտին մէջ նորարարական գործընկերութեան եւ ուժանիւթի ապահովութեան ոլորտին մէջ գործընկերութեան մասին փոխըմբռնման յուշագիրները։

Անկէ ետք հանդիպում կայացաւ Թրամփի եւ Ալիեւի միջեւ։

Միացեալ Նահանգներու նախագահը յայտնեց, որ բազում անգամներ Հայաս–տանի եւ Ատրպէյճանի դեկավարները փորձած են հասնիլ համաձայնութեան, սակայն ցարդ չեն յաջողած։ Ան շնորհակալութիւն յայտնեց արտաքին գործոց նախարար Մարքօ Ռուպլոյին, իր յատուկ յանձնակատար Սթիւ Ուիթքոֆին, ինչպէս նաեւ շնոր–հաւորեց արտաքին գործոց նախարարութեան կազմը։ «Աւելի քան 35 տարի է Հայաս–տանն ու Ատրպէյճանը կը պատերազմին ցաւալի հակամարտութեան շրջագիծի մէջ, որ մեծ տառապանքներ պատճառած է երկու ժողովուրդներուն։ Այս հարցին լուծում փորձած են գտնել շատեր, որոնց կարգին՝ Եւրոպական Միութիւնը, Ռուսիան, որ շատ աշխատած է այս ուղղութեամբ, սակայն չէ յաջողած», նչեց ան աւելցնելով, որ այս արձանագրութեամբ վերջապէս կարելի եղած է հասնիլ խաղաղութեան հաստատման։

Միացեալ Նահանգներու նախագահը, Հայաստանի վարչապետն ու Ատրպէյճա–նի նախագահը հանդէս եկան միացեալ մամլոյ ասուլիսով, որուն սկիզբը Թրամփ ըսաւ. «35 տարի իրենք կռուած են ու հիմա ընկերներ են եւ ընկերներ պիտի ըլլան երկար ժամանակ։ Մեծագոյն պատիւ է բոլորը ողջունել Սպիտակ տան մէջ՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ այս պատմական վեհաժողովին։ Կ’ուզեմ ողջունել երկու հրաշա–լի աւաջնորդները Ուաշինկթըն գալու համար, որպէսզի ստորագրեն այս պատմական արժէք ունեցող հռչակագիրը»։ Ան աւելցուց, որ ստորագրուելիքը շատ մեծ կարեւո–րութիւն ունեցող փաստաթուղթ է։

Թրամփ յայտարարեց, որ Հայաստանն ու Ատրպէյճանը պարտաւոր կը դառնան ընդմիշտ դադրեցնել բոլոր ռազմական գործողութիւնները։

«Հայաստան ու Ատրպէյճան յանձն կ’առնեն յաւերժ դադրեցնել որեւէ տեսակի կռիւ, բանալ առեւտրական, ճանապարհորդական, դիւանագիտական յարաբերութիւն–ները, յարգել միմեանց ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը, ինչ որ շատ կարեւոր է։

«Իրենք շատ լաւ յարաբերութիւններ պիտի ունենան։ Այդքան յաճախ չեն հան–դիպած իրարու, բայց կը կարծեմ՝ պիտի հանդիպին։ Կասկած չկայ, այլապէս՝ ինծի հե–ռաձայնեցէք, ես կ’ուզղեմ ամէն ինչ», ըսաւ Թրամփ։

Միաժամանակ ան յայտնեց, որ Միացեալ Նահանգներ կը վերացնեն Ատրպէյճա–նի հետ ռազմական համագործակցութեան սահմանափակումները։

Խօսելով ճամբուն մասին՝ նախագահ Թրամփ ըսաւ. «Ասիկա պիտի ըլլայ յատուկ տարանցիկ տարածք, որ թոյլ պիտի տայ Ատրպէյճանին լիակատար հասանելիութիւն ունենալ Նախիջևանի իր տարածքին՝ լիովին յարգելով Հայաստանի ինքնիշխանու–թիւնը»։ Ըստ անոր, ամերիկեան ընկերութիւնները լայնածաւալ ենթակառուցուածքա–յին զարգացման կը ծրագրեն Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ։

«Անոնք պիտի կարենան իսկապէս ապրիլ ու աշխատիլ միասին, ինչ որ հիանալի է», ըսաւ Թրամփ։ Ան աւելցրեց, որ Հայաստան նաեւ կը հաստատէ բացառիկ համա–գործակցութիւն Միացեալ Նահանգներու հետ՝ զարգացնելու այդ ուղին, որ կրնայ երկարաձգուիլ մինչեւ 99 տարի։ «Եւ անոնք կը խոստանան, որ 99 տարի ետք պիտի երկարաձգեն ժամկէտը, այնպէս չէ՞», հարց տուաւ ան՝ դիմելով հայկական պատ–

Վանաձորի մէջ սկիզբ առաւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան 15-րդ պատանեկան ճամբարը



4 Օգոստոս 2025–ին, Վանաձորի մէջ սկիզբ առաւ ՀՅԴ Գանատայի Երի–տասարդական Միութեան 15–րդ պատանեկան ճամբարը, որուն որպէս վարիչ Գանատայէն կը մասնակցին երիտասարդականի 17 անդամներ, երկուքը՝ որպէս վարիչ տնօրէն ճամբարի։ Թորոնթոյէն կը մասնակցին 7, Վանգուվըրէն՝ 1, Մոնթ–րէալէն՝ 2, Լաւալէն՝ 7 վարիչներ, որոնք հայրենի նորահաս սերունդը ազգային գաղափարախօսութեամբ թրծելու յանձնառութիւնը ստանձնած՝ կը գտնուին հայ–րենիք։ Նշենք, որ Վանաձորէն եւ շրջակայքէն կը մասնակցին աւելի քան 200 պատանիներ։ Ծամբարի այս տարուան թեման է «Ինչպէ՞ս նպաստել հայրենիքի պահպանման եւ բարգաւաճման», իսկ տեւողութիւնն է Օգոստոս 4–էն 15։

15 տարիէ ի վեր Վանաձոր քաղաքին մէջ կը կայանան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) սոյն ճամբար–ները, որպէս ԳԵՄ–ի հայրենի ծրագիր, եւ որոնք կ’ընդգրկեն Դաշնակցութեան եւ Հայ Դատի պատմութեան, Արցախի պատմութեան եւ հայրենասիրական երգերու ուսուցում, ինչպէս նաեւ մարմնակրթական եւ ուսուցողական խաղեր։

Անցնող տարիներուն, ՀՅԴ Գանատայի երիտասարդականի անդամներէն աւելի քան հարիւր պատասխանատու–վարիչներ գործուղուած են Լոռիի մարզ, եւ նոյն այդ ժամանակահատուածին երկու հազար երեխաներ մասնակից դարձած են ՀՅԴ ԳԵՄ–ի ամառնային ճամբարներու ծրագիրներուն։

Վանաձորի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութեան 15-րդ պատանեկան ճամբարը

ուիրակութեան։ Միացեալ Նահանգներու նախագահը յայտարարեց, թէ կ’ակնկալ–ուի, որ ամերիկեան կազմակերպութիւնը մեծածաւալ ենթակառուցուածքներ պիտի զարգացնէ հոն, եւ մեծ գումար պիտի ծախսուի։ «Ասկէ տնտեսապէս պիտի շահին մեր երեք երկիրներն ալ։ Ասիկա չափազանց դրական լուր է ամբողջ տարածաշրջանին հա–մար», չեչտեց Թրամփ՝ տեղեկացնելով, որ իրենք երկկողմանի համաձայնագիրներ կը ստորագրեն Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ՝ ընդլայնելու համագործակցութիւնը ուժանիւթի, առեւտուրի եւ արհեստական բանականութեան ոլորտներուն մէջ։

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ըսաւ, որ Ատրպէյճանի ժողովուրդը պիտի յիշէ այդ օրը՝ նախագահ Թրամփի կողմէ «մեր երկրին նկատմամբ ցուցաբերուած վե–րաբերմունքին համար»։

«Այսօր մենք կը հաստատենք խաղաղութիւն, որ նոր կարելիութիւններ պիտի բանայ տարածաշրջանին մէջ, եւ որ պիտի վերացնէ խոչընդոտները եւ կարելիութիւն–ներ պիտի ստեղծէ բազմաթիւ երկիրներու համար», ըսաւ Ալիեւ՝ նշելով. «Նախագահ Թրամփ խաղաղութիւն կը բերէ Կովկասի մէջ, եւ մենք շնորհակալ ենք ատոր համար։ Մենք պիտի դարձնենք արիւնահեղութեան էջը, եւ պայծառ ապագայ պիտի ապահո–վենք մեր երեխաներուն համար»։

Հայաստանի վարչապետ Փաշինեան իր կարգին ըսաւ. «Այս բեկումնային յա–ռաջընթացը հնարաւոր չէր լինի առանց նախագահ Թրամփի անձնական ներգրաւ–ուածութեան ու խաղաղութեան նկատմամբ նրա վճռական յանձնառութեան։ Խա–ղաղութեան պայմանագրի նախաստորագրումը ճանապարհ կը հարթի մեր երկրների միջեւ տաանամեակներ տեւած հակամարտութեանը վերջ դնելու համար եւ կը բացի նոր դարաշրջան»։ Ըստ անոր, համաձայնագիրներու ստորագրութեան ներկայ ըլլալով, նախագահ Թրամփ վստահութիւն կը հաղորդէ, որ՝ «մենք Հարաւային Կովկասում բա–ցում ենք խաղաղութեան, բարգաւաճման, տնտեսական համագործակցութեան էջը»։

Փաշինեանը յատկապէս ընդգծեց, որ տարածաշրջանին մէջ հաղորդակցութեան ուղիներու բացման համաձայնագիրը հիմնուած է ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան ու իրաւագօրութեան սկզբունքներուն վրայ։

«Սա լրջագոյն գործարք է մեր երկրների, տարածաշրջանի ու աշխարհի համար, քանի որ աւելի խաղաղ տարածաշրջանը նշանակում է աւելի խաղաղ աշխարհ», աւել–ցուց ան։ Փաշինեան անտեսելով լրագրողի մը՝ տեղահանուած արցախցիներուն Ար–ցախ վերադարձի կարելիութեան վերաբերող հարցում մը՝ նիւթը չեղելով յայտարարեց. «Նախագահ Թրամփը արժանի է Խաղաղութեան Նոպելեան մրցանակի, մենք պաշտ–պանելու ենք եւ այդ ուղղութեամբ ջանք ենք գործադրելու»։

Ալիեւ՝ միանալով այդ առաջարկին ըսաւ. «Ո՞վ, եթէ ոչ Թրամփը արժանի է Խա–ղաղութեան մրցանակին»։ Ան չեչտեց, որ նախագահ Թրամփ «հրաշք գործած է, միայն վեց ամսուան ընթացքին խաղաղութիւն բերած է տաանամեակներով պատերազմի մէջ գտնուող տարածաշրջանին մէջ»։

Պատասխանելով այն հարցումին, որ իրաւական հետեւանքներ պիտի ըլլա՞ն, եթէ կողմերէն ոեւէ մէկը հրաժարի ձեռք բերուած պայմանաւորուածութիւններէն՝ Միաց–եալ Նահանգներու նախագահը ըսաւ. «Ձեմ կարծիք, թէ նման բան տեղի պիտի ունե–նայ։ Ես ըսած եմ՝ մեծ խնդիրները լուծուած են, եւ եթէ փոքր խնդիր ունենան, կրնան հեռաձայնել ինծի, ես կը լուծեմ։ Եթէ խնդիր ըլլայ, մենք պիտի լուծենք»։

Իլհամ Ալիեւ յայտարարեց. «Մենք նախաստորագրած ենք Խաղաղութեան պայ–մանագիրը, որ երկար ժամանակէ բանակցութեան մէջ է, եւ փաստը, որ անիկա կը նախաստորագրուի, թիւ մէկ գերտէրութեան մայրաքաղաքին մէջ, աշխարհի թիւ մէկ դրասինեակին մէջ եւ Միացեալ Նահանգներու մեծն նախագահին ներկայութեան, կը նշանակէ, թէ կասկած իսկ պէտք չէ ըլլայ, որ կողմերէն ոեւէ մէկը ետքալլ պիտի կա–տարէ։ Եթէ մեզմէ ոեւէ մէկը մեր մտքերուն մէջ ունենայինք նման բան, չէինք դար հօս»։

Թրամփ նաեւ ըսաւ, թէ ինք չէ խնդրած, որ Հայաստանով անցնող երթուղին անուանակոչուի ի պատիւ իրեն, միաժամանակ աւելցնելով՝ «մեծ պատիւ է իրեն հա–մար»։

«Էստիէյթըտ փրես»–ը՝ վկայակոչելով Սպիտակ տան բարձրաստիճան պաշտօ–նատար մը, նշած է, որ իրականութեան մէջ հայերը առաջարկած են այդ անունը։

Խաղաղութեան Նոպելեան Մրցանակ Թրամփին, Ծամբան Ատրպէճանին, իսկ Հայաստանին` Ոչինչ

Ինչպէս նախատեսուած էր, նախագահ Տաֆըլտ Թրամփը Կովկասի մէջ «խաղաղութեան» համար Սպիտակ տան մէջ կազմակերպուած վեհաժողովը վերածեց ծիծաղելի ներկայացման մը՝ անընդհատ ինքնագովտւթիւն կատարելով, ինքնիրեն վերագրելով այնպիսի բաներ, զորս իրականութեան մէջ չէ ըրած, մեղադրելով նախագահ Պայտընը եւ յաճախ շեղելով հանդիպման թեմայէն։

Թրամփ միայն մէկ նպատակ կը հետապնդէր Սպիտակ տան մէջ այս միջոցառումը կազմակերպելով՝ ապահովել ինաղաղութեան Նոպելեան մրցանակը՝ իբր թէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան միջնորդութեան համար՝ պնդելով, թէ ոչ ոք կրցած է այդ մէկը ընել վերջին 35 տարուան ընթացքին։

Թրամփ իր Truth Social հարթակին վրայ անամօթաբար գովաբանեց ինքզինք. «Բազմաթիւ ղեկավարներ փորձած են վերջ դնել այդ պատերազմին, սակայն ցարդ՝ ապարդիւն, եւ միայն հիմա շնորհակալութիւն «Թրամփին»։ Ան նաեւ ինքնիրեն վերագրեց կարգաւորումը քանի մը այլ հակամարտութիւններու, որոնց մէջ որեւէ մասնակցութիւն չէր ունեցած։ Ան յարմարօրէն չիշխատակեց իր ամբարտաւան նախընտրական խոստումը լուծել ուքրանական պատերազմը՝ «նախագահի պաշտօնը ստանձնելէ 24 ժամ անց»։ Ան արդէն եօթը ամիսէ ի վեր նախագահ է, սակայն պատերազմը կը շարունակուի։

Խորամանկօրէն, վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու նախագահ Իլհամ Ալիեւը, տեղեակ ըլլալով Թրամփի եսապաշտական հակումներուն, խանդավառութեամբ սկսան քծնիլ անոր։ Նոյնիսկ առաջարկեցին ստորագրել միացեալ նամակ կոչ ուղղելով Նոպելեան կոմիտէին Թրամփին շնորհելու խաղաղութեան մրցանակ, քայլ մը, որ անոր մեծ հրճուանք պատճառեց։

Ազրպէյճանի հիմնական մասէն Հայաստանի վրայով դէպի Նախիջևեան տանող տարանցիկ ճամբու լուրջ հարցի արժարժումը արագօրէն վերածուեցաւ զաւեշտի, երբ յայտարարուեցաւ, որ անիկա պիտի կոչուի «Թրամփի ուղի» յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» (TRIPP)? Թրամփի փառամոլութեան յաւելեալ օրինակ մը։

Խաղաղութեան համաձայնագիրը, որուն մասին ամիսներէ ի վեր կը խօսի Փաշինեան, չստորագրուեցաւ, ինչպէս յայտարարուած էր, այլ միայն նախաստորագրուեցաւ նախորդ չաբաթ Սպիտակ տան մէջ կայացած վեհաժողովին ընթացքին վերածուելով ոչ պարտագիր փաստաթուղթի։ Ալիեւ շահագրգռուած չէ համաձայնագիրի ստորագրութեամբ, գիտակցելով որ այդպիսով պիտի զրկուի իր լծակներէնպահանջելու յաւելեալ զիջումներ Փաշինեանէն, որ մինչեւ օրս հնազանդած է անոր բոլոր պահանջներուն։ Ալիեւ պիտի յետաձգէ պայմանագրիի ստորագրութիւնը, մինչեւ որ Փաշինեան կատարէ Ատրպէյճանի յաւելեալ պահանջ մը փոփոխութիւններ կատարելու Հայաստանի սահմանադրութեան մէջ, գործընթաց մը, որ պիտի տեւէ յաւելեալ 10 ամիս։

Հայերը տեղեակ իսկ չեղան ստորագրուած համաձայնագրիի պայմաններէն։ Միայն օրեր անց հրապարակուեցաւ անոր բովանդակութիւնը, եւ յստակա՝

ցաւ, թէ Փաշինեան ի՛նչ յաւելեալ զիջումներ ըրած է Ատրպէյճանին։

Փաշինեան այս հռչակագիրով նաեւ կը դրժէ 2018–ին Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ հսկայ բազմութեան դիմաց տուած իր խոստուածը, որ որեւէ համաձայնագիր չի ստորագրեր, առանց նախապէս հանրութեան համաձայնութիւնը ստանալու։

Փաշինեան խաբեց հայ հասարակութիւնը՝ պնդելով, որ իբր թէ խաղաղութիւն կը բերէ Հայաստանին, յոյս ունենալով որ այդ խոստումը պիտի օգնէ անոր պահպանել իշխանութիւնը յաջորդ տարուան խորհրդարանական ընտրութիւններէն ետք։ Ալիեւի համար այս, այսպէս կոչուած, «Խաղաղութեան համաձայնագիր»–ը պարզապէս թուղթի կտոր է, զոր ան կրնայ որեւէ պահու խախտել ստորագրութեանէն ետք։ Եթէ Ատրպէյճան յարձակի Հայաստանի վրայ, ո՛չ արեւելեան, ո՛չ ալ արեւմտեան տէրութիւնները կը միջամտեն։ Հայ հասարակութիւնը պէտք չէ ի զուր ակնկալէ, որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը զօրքեր պիտի ուղարկէ՝ պաշտպանելու Հայաստանի սահմանները։ Նախորդ Ուրբաթ ստորագրուած յուշագիրը յստկօրէն կ’ըսէ, որ անիկա զուտ առեւտրական եւ ոչ թէ ռազմական համաձայնութիւն է։

Փաշինեանի հակասական դիրքորոշումներուն վերաբերող բազմաթիւ հարցեր կան։ Ամիսներ առաջ, երբ հայ լրագրող մը անոր հարցուց, թէ արդեօք ան պիտի քննարկէ՞ տարանցիկ ուղիի կառավարումը միջազգային կազմակերպութեան յանձնելու հարցը, Փաշինեան կտրականապէս մերժեց այդ դադափարը։ Այնուամենայնիւ, ան այժմ տարանցիկ ուղիի կառավարումը յանձնեց օտար կառոյցի։

Ահա դրժուած խոստում մը եւս։ Քանի մը ամիս առաջ, երբ Ալիեւ պահանջեց, որ Հայաստան համաձայնի լուծարել ԵԱՀԿ Մինսքի խումբը, Փաշինեան ըսաւ, որ այդ մէկը կը կատարէ «Խաղաղութեան համաձայնագիր»–ի ստորագրութեանէն ետք։ Բայց եւ այնպէս, նախորդ Ուրբաթ Փաշինեան ստորագրեց Սպիտակ տան յուշագիրը, որով կոչ կ’ուղղուի լուծարելու Մինսքի խումբը, հակառակ անոր որ Ալիեւ չէր ստորագրած համաձայնագիրը։

Աւելի մտահոգիչ է, որ նախաստորագրուած «Խաղաղութեան համաձայնագիր»–ը չի բովանդակեր որեւէ դրոյթ Պաքուի մէջ պահուող հայ պատանդներու ազատ արձակման, 2021–էն ի վեր Հայաստանի բռնադբաւուած տարածքներէն ատրպէյճանական զօրքերու դուրսբերման կամ 120 հազար բռնի տեղահանուած արցախահայերու վերադարձի իրաւունքին վերաբերեալ, հակառակ Միջազգային քրէական դատարանին կողմէ անոնց հայրենադարձութեան վերաբերեալ որոշումին։ Ասիկա վարձատրութիւնն է Ալիեւի յանցաւոր վարքագիծին։ Մինչեւ Ատրպէյճան չվերանայի իր դիրքորոշումը այս հարցերուն մէջ, Փաշինեան պէտք է հրաժարի նախաստորագրել կամ ստորագրել պայմանագիրը։ Յուսամ՝ ան չի վստահիր խոստումներուն Թրամփին, որ Ապրիլի 24–ին մերժեց ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը, հակառակ անոր որ Քոնկրեսը եւ նախագահ Պայտընը ճանչցած էին զայն։

2020–ին Հայաստան համաձայնեցաւ Ատրպէյճանին տրամադրել տարանցիկ ուղի իր տարածքով, փոխարէնը ստանալով Արցախը Հայաստանին կապող Լաչինի միջանցքը։ Այդ թուականէն ի վեր Ատրպէյճան բռնադբաւած է Արցախն ու Լաչինի միջանցքը, վերացնելով Հայաստանի պարտաւորութիւնը պահպանելու զինադադարի համաձայնագիրը։ Այս տարանցիկ կապը «Թուրանի ճամբայ»–ն է՝ Թքբական աշխարհի դարաւոր երազը, որ Թուրքիան եւ Ատրպէյճան պիտի կապէ Կեդրոնական Ասիոյ Թքբական հանրապետութիւններուն։ Ցաւօք, այս հարցերը կարծէք շատ քիչ կը հետաքրքրեն Փաշինեանը, որ աւելի շատ կեդրոնացած է իր պաշտօնը պահելու, քան Հայաստանի շահերը պաշտպանելու վրայ։

Սպիտակ տան արարողութեան ընթացքին Ատրպէյճանի հիմնական ձեռքբերումներէն մէկը եղաւ 1992–ին Քոնկրեսի կողմէ ընդունուած «Ազատութեան աջակցութեան աքթ»–ի 907–րդ յօդուածի կասեցուծը, որ կ’արգիլէր Միացեալ Նահանգներու կառավարութեան ուղղակի օգնութիւն տրամադրելու Ատրպէյճանին։ Այժմ Ատրպէյճանը կրնայ գնել միլիառաւոր տոլարներու արդիական ամերիկեան զէնք, զոր կրնայ օգտագործել Հայաստանի դէմ։ Ասիկա արդեօք ինչպէ՞ս կը նպաստէ խաղաղութեան։

Հանրութեան որեւէ մանրամասնութիւն չէ ներկայացուած Միացեալ Նահանգներուն կողմէ ճամբու կառավարման վերաբերեալ։ Ինչո՞ւ անիկա տրամադրուեցաւ 99 տարիով յաւելեալ 99 տարի երկաւրածդելու կարելիութեամբ փաստօրէն զայն վերջնականապէս յանձնելով Միացեալ Նահանգներու կառավարութեան՝ Հայաստանի ինքնիշխանութեան հաշւոյն։ Նաեւ պարզ չէ, թէ ի՞նչ օգուտ պիտի ստանայ Հայաստանը իր տարածքով միլիառաւոր տոլարներ արժողութեամբ ապրանքներու տարանցումէն։

Տարիներ շարունակ Փաշինեան դէմ էր Ալիեւի պահանջին՝ Հայաստանով անցնող ճամբու փոխարէն «միջանցք» ստեղծելու վերաբերեալ։ Միջանցքը կ’ենթադրէ, որ տարանցիկ ուղին պիտի նկատուի ատրպէյճանական տարածք։ Այնուամենայնիւ, երբ նախագահ Թրամփ ելոյթ ունեցաւ Սպիտակ տան վեհաժողովին, ան այդ ճամբան «միջանցք» կոչեց։ Աւելի՛ն. երեք ղեկավարներուն կողմէ ստորագրուած համաձայնագիրին մէջ ներառուած է «անխոչընդոտ տարանցում» խնդրայարոյց եզրոյթը։ Ի՞նչ կ’ենթադրէ «անխոչընդոտ» բառը։ Արդեօք այդ կը նշանակէ, թէ Հայաստան իրաւունք չունի՞ ստուգելու Ատրպէյճանէն իր տարածքը անցնող անձերուն անձնագիրներն ու ուղեբեռը։

Ահա՛ Սպիտակ տան վեհաժողովի հիմնական արդիւնքը. Թրամփ կրնայ ստանալ իր Խաղաղութեան Նոպելեան մրցանակը, Ալիեւը, Էրտողանը եւ Թքբական աշխարհը պիտի ապահովեն իրենց տարանցումը Հայաստանի տարածքով, մինչդեռ Հայաստան պիտի արտայանձնէ իր ինքնիշխան տարածքը եւ պիտի հեռացնէ Իրանը՝ իր միակ տարածաշրջանային դաշնակիցը։

Յարութ Սասունեան

Յայտ. ... Սկիզբը կարդալ էջ 1

Շարունակական կեղծիքներու, սուտ խոստումներու եւ ամբոխավարութեան քօղին տակ ոտնակոխուած են Հայաստանն ու հայ ժողովուրդին շահերը։ Հայաստանի իշխող վարչակազմի որդեգրած ապազգային եւ անհեռանկար քաղաքականութեան արտացոլացումը հանդիսացող, իր էութեամբ հակապետական յայտարարութիւնը ունի մէկ նպատակ՝ ի գին Հայաստանի իրաւունքներուն օտար շահերուն սպասարկող ՀՀ իշխող վարչակազմի վերարտադրութիւն՝ Հայաստանը դարձնելով աշխարհաքաղաքական շահերու բախման թատերաբեմ։

Ատրպէյճանի շարունակական նախապայմաններու, արցախահայութեան նկատմամբ ի գործ դրուած ցեղասպանական գործողութիւններու, Արցախի ցեղային գտման եւ ամբողջական հայաթափման, Հայաստանի տարածքներու բռնադբաւման, Պաքուի մէջ ընթացող կեղծ դատավարութիւններու եւ արցախահայութեան վերադարձի իրաւունքի ոտնահարման եւ յանուն շահի այս բոլորին մեծ տէրութիւններու աչք փակելու պայմաններուն մէջ՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ վստահութեան մթնոլորտի ձեւաւորումը ո՛չ միայն իրատեսական չէ, այլեւ՝ բնոյթով յանձնուողական։

Ըստ այդմ.

***** Կը յայտարարենք, որ Արցախի հակամարտութիւնը լուծուած չէ եւ միջազգային հանրութիւնը, մասնաւորաբար ԵԱՀԿ–ն՝ իբրեւ այս հարցի կարգաւորման միջազգային օրինական մանդատ ունեցող միակ հարթակ՝ պարտաւոր են գործել զայն հանգուցալուծելու ուղղութեամբ։

***** Կ’ընդգծենք, որ ստորագրուած յայտարարութիւնը, ըստ էութեան, կ’օրինականացնէ միջանցքի գաղափարը եւ ուղղուած է բացառապէս ատրպէյճանական շահերու սպասարկման։

***** Կը հաստատենք, որ որեւէ անումաբ եւ կարգավիճակով՝ Ատրպէյճանին Հայաստանի Հանրապետութեան տարածքով «անխոչընդոտ հաղորդակցութիւն» տրամադրելը, իրականութեան մէջ «Թուրանական միջանցք»–ի իրացում է եւ Հայաստանի իքնիշխանութեան ոտնահարում։

***** Կը պահանջենք՝ Հայաստանի տարածքէն Ատրպէյճանի զինուած ուժերու դուրսբերում, Արցախի ռազմաքաղաքական պատանդներու անյապաղ ազատ արձակում, Արցախի հայութեան հաւաքական, անվտանգ, երաշխաւորուած եւ արժանապատիւ վերադարձի համար պայմաններու ստեղծում։

***** Համոզուած ենք, որ ռազմական գործողութիւններու եւ ցեղասպանական յանցագործութիւններու իբրեւ հետեւանք ձեւաւորուած սթաթուս քոն չի կրնար առաջնորդել կայուն խաղաղութեան։

ՀՅ Դաշնակցութիւնը հաւատարիմ կը մնայ ժողովրդավարութեան, արդարութեան եւ արժանապատիւ խաղաղութեան հաստատման միջազգային սկզբունքներուն։

ՀՅԴ ԲԻՒՐՕ
8 Օգոստոս 2025

ANCC Roupen Kouyoumdjian Scholarship launched

OTTAWA—The Armenian National Committee of Canada (ANCC) is proud to announce the launch of the ANCC Roupen Kouyoumdjian Scholarship — a tribute to the legacy of Roupen Kouyoumdjian, the former and long-serving Executive Director of the ANCC, whose decades of dedication left a lasting impact on Armenian-Canadian advocacy.

This scholarship program is designed to empower the next generation of Armenian-Canadian leaders by providing financial support to university students pursuing studies in Political Science, History, Journalism, and other disciplines within the humanities and social sciences.

Through this initiative, the ANCC reinforces its commitment to education, civic engagement, and the continued advancement of Armenian-Canadian voices in the public sphere. For more information, please visit the ANCC website (ancccanada.org).

Pashinyan breached ethics over ‘indecent’ language, Anti-Corruption Committee says

YEREVAN—Armenia’s Anti-Corruption Committee has found Prime Minister Nikol Pashinyan in breach of ethics after reviewing public complaints that he used the equivalent of the F-word on social media and an opposition claim that he called a political opponent a “drudge” during a parliamentary debate.

The ACC, which is also responsible for overseeing the ethical behavior of officials, said it reached this conclusion on the first complaint after several linguistic examinations determined that the word used by the premier was “vulgar, coarse, and indecent.”

As part of the probe, which lasted more than two months, the ACC asked Pashinyan to clarify his use of an Armenian verb equivalent to the English verb “bang” in a sexual context. Pashinyan used the verb in discussing an unnamed clergyman in a Facebook post on May 30.

According to the ACC, the premier’s position is that “the word is colloquial but not indecent”, and that “it was used in the context of defending the values of the Holy Church.”

Members of Pashinyan’s political team shared this view, seeing no issue with the use of such language. Srбуhi Galyan, the minister of justice in Pashinyan’s cabinet, in particular, described it as language “containing sharp nuances.”

“If it does not cross the boundary of legality, I think there is no problem here,” she said.

A language expert invited by the ACC found that the verb, which has other meanings too, began to be associated in colloquial Armenian with sexual intercourse starting in the 2000s. However, the expert refrained from speculating on which meaning the prime minister intended.

The ACC ultimately concluded that Pashinyan used the word in its meaning of “having sexual intercourse.”

The Committee found that, by using the word in his social media post, the prime minister “violated the principles of decency and respect; he must realize the special influence his words may have on the culture of public debate and the reputation of others.”

The ACC also found Pashinyan in breach of ethnics for using another word against an opposition lawmaker that roughly translates to “drudge”, but exonerated him regarding accusations of “erratic anger” toward opposition members during a question-and-answer session in parliament in May.

According to the ACC, Pashinyan expressed regret over the incident and stated that his words and actions were not intended as personal insults or threats.

The ACC concluded that while Pashinyan was angry and was speaking loudly, no personal insults were directed at lawmakers. It described the incident as part of an ongoing dispute and said that although Pashinyan’s general rhetoric was “provocative and shocking”, it was an acceptable reaction to criticism in a political debate.

Regarding the word in question, the ACC stated that regardless of an opponent’s behavior, a public official must remain restrained, polite, and decent. It deemed the word insulting and its use a violation of rules of conduct.

Under Armenian legislation, the prime minister must provide “clarifications” on the government website regarding the breaches found by the ACC within three days after the publication of the findings.

(RFE/RL)

Trump’s “peace route” raises alarm over Armenian sovereignty

YEREVAN—In a significant development, Armenian Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev, with U.S. President Donald Trump as mediator, signed a preliminary peace agreement at the White House on August 8, 2025. The deal has stirred uncertainty and concern in Yerevan, with many Armenians viewing it as a concession imposed under intense external pressure and fearing threats to the country’s sovereignty and constitutional integrity.

Days after the trilateral agreement was signed, Special Representative of the President of Azerbaijan Elchin Amirbekov announced that Baku expects concrete legal steps from Yerevan following the Washington declaration.

“The document outlines provisions for the pre-signing of a peace agreement between Armenia and Azerbaijan and affirms the necessity of subsequent steps toward its full ratification,” Amirbekov stated. “In other words, for the peace agreement to move forward, Baku expects Armenia to amend its constitution to eliminate any remaining territorial claims toward Azerbaijan.”

Amirbekov emphasized that constitutional alignment is not only a political formality but a foundational requirement for lasting peace. He also highlighted another key clause in the trilateral declaration: the obligation to open transport and communication links between the two nations. Specifically, he stressed the importance of ensuring “unimpeded” connectivity between Azerbaijan and Nakhichevan—one of the most contentious and strategically critical aspects of the corridor agreement.

The governments of Armenia and Azerbaijan released the text of the so-called Agreement on the Establishment of Peace and Inter-State Relations. While presented as a peace agreement, the document imposes a series of binding commitments on Armenia that critics argue reflect an imbalance in favor of Azerbaijani interests.

Under the terms of the agreement, Armenia is required to officially recognize Azerbaijan’s territorial integrity, including all Soviet-era borders, and renounce any current or future territorial claims. The agreement also prohibits either party from supporting movements or actions that challenge the other’s sovereignty, effectively barring Armenia from engaging on issues related to Artsakh. Diplomatic relations are to be established, and all legal disputes, international claims and pending cases between the two sides must be withdrawn within one month of ratification.

The text further obliges Armenia to prevent any third-party military presence along its border with Azerbaijan and to accept a framework for “unimpeded” regional connectivity—widely interpreted as a concession to Azerbaijani demands for a corridor to Nakhichevan. While it mandates cooperation on issues like missing persons from previous conflicts, it does not specify mechanisms for justice or accountability. Additionally, the agreement states that any internal laws conflicting with its provisions will be overridden, and that the English version of the text will take precedence in case of interpretation disputes. The agreement will take effect only after both countries complete their internal ratification processes.

At the White House on August 8, Trump hailed the gathering as a “very historic peace summit” between Pashinyan and Aliyev. Flags, handshakes and a carefully choreographed ceremony accompanied the signing of a joint declaration promising to end hostilities “forever,” open diplomatic relations, facilitate trade and tourism and mutually recognize each nation’s sovereignty and territorial integrity.

At the heart of the agreement is what Trump dubbed the “Trump Route for International Peace and Prosperity”—a transit corridor that will allow Azerbaijan direct access to Nakhichevan through sovereign Armenian territory.

Trump, who referred to the project as a “corridor” three separate times during his remarks, emphasized that the route would be developed through an exclusive 99-year U.S.-Armenia partnership, with the expectation—per his words—that “after 99 years, they will extend it.”

President Trump framed the initiative as a win-win, backed by significant U.S. investment in the region’s infrastructure, along with new bilateral agreements with both Armenia and Azerbaijan in energy, trade and technology. Notably, the summit also saw the lifting of long-standing U.S. restrictions on military-technical cooperation with Azerbaijan, including the repeal of Section 907 of the Freedom Support Act, which had barred direct aid to Baku.

President Aliyev called the day “historic,” celebrating what he described as decades of war ending and the newfound freedom to connect with Nakhichevan without obstruction. Prime Minister Pashinyan, for his part, labeled the declaration a “milestone” and echoed Trump’s economic optimism, citing infrastructure and investment opportunities, though he offered little detail on how Armenia’s sovereignty would be enforced on the ground.

Despite the diplomatic smiles and economic promises, many in Armenia view the summit—and the agreement—as a capitulation under pressure.

While Azerbaijan walked away with concrete gains—including the repeal of Section 907, direct access to Nakhichevan and the final dissolution of the OSCE Minsk Group—Armenia did not secure the return of its prisoners of war, nor did it regain control over its sovereign territories currently occupied by Azerbaijan. The issue of the forced displacement of Armenians from Artsakh was notably absent from the summit, with all three leaders pointedly refusing to answer press questions on the matter.

In the aftermath, Armenian Foreign Minister Ararat Mirzoyan attempted to reassure the public by asserting that any infrastructure developed under the agreement would fall within Armenia’s sovereign jurisdiction. “There is no room for different interpretations here,” he said, referring to Article 3 of the declaration. “Everything will be implemented within the framework of our territorial integrity, sovereignty and jurisdiction.”

However, critical questions remained unanswered, such as the fate of Armenian prisoners of war, the return of the occupied territories of Armenia and the rights of forcibly displaced Armenians from Artsakh. At the same time, practical questions about the proposed transit corridor’s implementation linger: Who will regulate Azerbaijani entry and exit on Armenian soil? Will Armenian authorities have full control over passport and customs procedures? Will Armenian forces be physically present along the corridor? Who will inspect Azerbaijani cargo?

These unresolved issues have left many in Armenia questioning not just the viability of the agreement, but the cost at which it was reached—and whether sovereignty, once again, has been traded for uncertain promises.

Murad Papazyan, a member of the Armenian Revolutionary Federation (ARF) Bureau and co-chairman of the Coordinating Council of Armenian Organizations of France, strongly criticized the Washington agreement, arguing it “benefits Azerbaijan and Turkey” while significantly weakening Armenia.

According to Papazyan, the agreement endorses the construction of the Zangezur corridor, which he described as “a serious encroachment on the sovereignty and security of Armenia.” He emphasized that the corridor would strip Armenia of control over part of its internationally recognized territory, compromise its southern border with Iran and be managed by Turkish forces with potential NATO involvement—posing what he called “an existential

Continued on page E2

A Mari Usque Ad Mare

DAWSON CITY RECREATION CENTRE RECEIVES \$63.9 MILLION INVESTMENT FROM GOVERNMENTS OF CANADA AND YUKON

In a recent press declaration made by the governments of Canada and of Yukon, a new combined investment of \$63.9-million was announced for the construction of a new community recreational space in Dawson City. The new recreation called the Dawson City Recreation Centre will be built to modern standards, providing a safe and accessible amenities for the residents and guests. The Centre will be located at the southeast corner of Dome Road and the North Klondike Highway and the construction will include a ice rink, curling sheets, a state of the art fitness centre, indoor play area, and an indoor walking loop.

“Our government supports local infrastructure projects that can serve Northerners and families more holistically and sustainably. The new Dawson City Recreation Centre will be an accessible and inclusive hub space where people can connect and access diverse amenities and programming for many years to come,” said Dr. Brendan Hanley, Parliamentary Secretary to the Minister of Northern and Arctic Affairs and MP for Yukon.

Richard Mostyn, Minister of Community Services of Yukon said, “We are thrilled to be part of bringing a new recreation centre to life for the Dawson community. This project is about more than just a building; it’s about creating a space where people can connect, stay active, and come together for years to come. It’s a promise we made to the community, and we’re excited to see it becoming a reality. A heartfelt thank you to the City of Dawson, the Government of Canada, and Tr’ondëk Hwëch’in for their strong partnership and shared commitment in making this vision possible.”

CANADA AND ONTARIO INVEST IN GREEN TRANSIT IN NORTH BAY

In a recent press declaration made jointly by MP Pauline Rochefort, MPP for Nipissing Vic Fedeli, and North Bay Mayor Peter Chiricohe, on behalf of the Federal Government of Canada and the Provincial Government of Ontario, a \$20.6-million combined investment is on track for North Bay, which will fund the construction and upgrading of the public transit infrastructure of the area. This investment will help build a more sustainable and convenient transit system for the residents of the area. The new public transit will be safer than ever before and there will also be a focus on making it more environmentally friendly by introducing all new hybrid buses to the fleet, build new sidewalks and much needed upgrade to the stormwater system.

MPP Fedeli said: “under the leadership of Premier Ford, our government is investing nearly \$70 billion to deliver the largest transit expansion in Canadian history. Today’s investment will help upgrade and expand transit infrastructure in North Bay, connecting more people in our community to housing and jobs, supporting local businesses and growing North Bay’s economy while we work to protect Ontario against economic uncertainty and unjust U.S. tariffs.”

“This investment will help us support and improve a more sustainable, modern transit system in North Bay. From hybrid buses to upgraded infrastructure, these projects will make transit safer, more accessible, and more convenient for everyone. We’re grateful for the continued support through the ICIP program over the years, which has been instrumental in helping us strengthen our city’s transit network,” said Mayor Chirico.

GOVERNMENT OF CANADA INVESTS IN SOLAR PROJECT IN ANAHIM LAKE


In a recent press declaration made by the Government of Canada, it was announced that an additional \$4.9-million in funding will be allocated to increase the total investment of support for the Anahim Lake Solar Project to \$17-million. This investment into the Anahim Lake Solar Project will provide the necessary funding to build a brand-new solar energy station that will help provide the Ulkatcho First Nation with access to clean and renewable energy that is not only better for the environment but also a cheaper, safer and healthier option than diesel power that they currently use.

The Anahim Lake Solar Project’s solar station is being built in Anahim Lake, B.C., and will help reduce the use of diesel by approximately 1.1 million litres per year, making this one of Canada’s largest off-grid solar projects, cleaning up the environment and maintaining a healthier home for locals. The investment into this project will also help with the construction of new roads and path to provide access, and they will also be building a brand new control and monitoring facility for the station along with fire management and security stations.

Tim Hodgson, Minister of Energy and Natural Resources said: “this is what bold, community-led action looks like. The Anahim Lake Solar Project — now Canada’s largest off-grid solar initiative — marks a major step forward in reducing emissions, strengthening local economies and advancing economic reconciliation. With construction now underway, we’re proving that Canada has what it takes to lead in the global clean energy transition — and that we’re doing it in partnership with Indigenous Peoples.”

ISHKHAN GHAZARIAN
Local Journalism Initiative Reporter

IN MEMORIAM
Steve Ashekian
(1937-2025)



In memory of Steve Ashekian, who was born in Kessab, Syria. Steve dedicated over 30 years to his beloved store, “Windsor Shoe Repair and Alterations,” a place where many found not only quality craftsmanship but also a warm smile and friendly conversation.

His unwavering commitment to the Armenian community in Windsor, Ontario, was evident, as he was a dedicated member of the Armenian Revolutionary Federation (ARF) since the inception of the Windsor Armenian Community Centre. Steve was always ready to lend a hand, particularly during Hay Getron barbecues, where his generosity and spirit shone brightly. He had a deep appreciation for gardening and Mother Nature, taking pride in nurturing his walnut tree and savouring the fruits of his labour.

A humble man at heart, he cherished playing cards, indul-

ging in desserts, and socializing with friends. He was especially dedicated to gathering the family together every year on Boxing Day (December 26), creating cherished memories that brought everyone closer.

Even as his health declined, Steve’s resilience was remark-

able; he would always lift his arm and give a thumbs up, embodying his strong character and positive outlook. As a faithful supporter and loving family man, Steve had a unique ability to bring joy to those around him. His contagious spirit and warm laughter left a lasting impression on everyone he encountered.

We honour Steve with a cup of his homemade moonshine, his cherished perpoor (grape molasses) nights, beef tongue soup, pizza, and halva. As we remember him, let us keep in our prayers his dedication, hospitality, humour, and unwavering support for others.

We will miss him dearly within the entire Armenian community. His memory will live on in our hearts, and we extend our deepest condolences to all of Steve’s family and friends. May he rest in peace.

TALEEN LARA ASHEKIAN

TRUMP’S ...

continued from page E1

threat” to the country.

Papazyan framed the corridor as a key element of a broader “pan-Turkist strategy” long pursued by Ankara and Baku through military pressure and diplomacy. He criticized Prime Minister Nikol Pashinyan for making “unilateral concessions” without securing any reciprocal gains, such as the release of Armenian prisoners, the return of displaced Artsakh residents or a withdrawal of Azerbaijani troops from Armenian territory.

“Such passivity is part of an already familiar pattern,” Papazyan noted, accusing Pashinyan of weakening Armenia’s statehood and undermining national security. He also expressed concern over deeper geopolitical shifts, including rapprochement with Turkey, refusal to pursue international legal actions against Azerbaijan and even questioning of the Armenian Genocide.

“Under the guise of regional peace, this program serves the interests of Ankara and Baku,” he warned, calling the Zangezur corridor “a strategic split opened in the heart of the country.”

Former

Foreign Minister of Armenia Vartan Oskanian also condemned the U.S.-mediated agreement as a “surrender of sovereignty” disguised as diplomacy. He particularly denounced approval of the so-called Zangezur corridor, which would allow Azerbaijan unimpeded access across Armenian territory under the control of a third country, without customs checks or border inspections.

“Only in the alternate real-

ity of Pashinyan’s subordinates can the effective handover of the Zangezur corridor be portrayed as a ‘strategic victory,’” Oskanian wrote. According to him, allowing another country to control a corridor stretching across the full width of Armenia—without any regulatory oversight—amounts to leasing part of the nation’s sovereignty “for at least two generations.” He added, “This is not diplomacy—it is the sale of national dignity.”

(The Armenian Weekly)

Ascenseur **Adams** Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Des millions manquants : des poursuites pénales visent l’ancien directeur de l’ANIF Davit Papazian et deux autres personnes

EREVAN—Hetq révèle que le bureau du procureur général d’Arménie (PGO) a ouvert une procédure pénale publique visant trois personnalités liées à la gestion de fonds publics:

—Davit Papazian, ancien directeur du Fonds national d’intérêt arménien (ANIF),

—Bella Manukyan, ex-directrice du Fonds d’investissement anti-crise pour les entrepreneurs et l’État (ESIF),

—Karineh Andreasyan, actuelle directrice de la société CFW CJSC.

L’annonce fait suite à une demande écrite adressée par Hetq au parquet. Les trois avaient déjà été cités dans une enquête du média d’investigation pour irrégularités financières et mauvaise gestion de fonds publics.

Selon Hetq, le gouvernement arménien avait injecté 1,5 milliard de drams (environ 3,8 millions de dollars) dans CFW CJSC le 4 mai 2023, soit à peine huit jours après la création de la société. Celle-ci, détenue par des structures offshore dans le Delaware (États-Unis), entre-

tient des liens avec l’entourage de l’actuel maire d’Erevan, Tigran Avinyan, dont l’épouse figure dans le réseau relationnel d’Andreasyan.

Papazian, licencié de l’ANIF en janvier 2024, refait aujourd’hui surface à l’international en tant que président du controversé Fonds humanitaire pour Gaza (GHF). L’ANIF, créé en 2019 pour attirer des investissements étrangers sous l’égide du gouvernement arménien, avait été dissous en 2024.

